

**ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԱՌԿԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ՝
ԱՌԱԿՆԵՐՈՎ ՔԱՐՈՁԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԵՅԼԵՐՅԱՆ

Աստվածաշնչում որոշ գրքեր ունեն բարոյախրատական հստակ բովանդակություն, որն ընդունված է կոչել ուսուցողական: Մովսեսի գրքերի հետ համեմատած, որոնք Տիրոջ անշեղ պատվիրաններն են, ուսուցողական գրքերը մասամբ ասես մարդկանց աստվածահաճո վարքականոն լինեն: Դրանց շարքում կարելի է դասել Հոբի գիրքը, Սաղմոսները, Առակացը, Ժողովողը, Երգ երգոցը, Սողոմոնի և Սիրաքի որդի Հիսուսի իմաստասիրությունները: Իրենց կառուցվածքով հինկտակարանյան նշյալ գրքերի մեծ մասը չափածո է:

Առաջին դարում՝ Քրիստոսի քարոզասացության շրջանում, Արևելքի ժողովուրդների մեջ չափազանց տարածված էին առակները. «Այսինքն՝ խօսէր նոցա զբազում բանս աստուածայինս և հոգևորս, սակայն ի ձեռս պէսպէս առակաց և օրինակաց, ըստ որում սովորութիւն էր ազգին այնորիկ, և ժամանակին, զի այնպիսի վարդապետութիւնքն ի ներքոյ ոմանց առակաց, և նմանութեանց լինիցին»¹: Հոյները և հրեաները նոյնպէս, հատկապէս բանավոր խոսքում, օգտագործում էին այս ժանրը: Քրիստոսը պարզապէս շարունակում է ժողովրդին հարազատ հինկտակարանյան այս ավանդույթը: Պատահական չէ, որ Նա ոչ միայն հղում է անում սաղմոսերգու Դավթի խոսքերին («Բացից առակաւք զբերան իմ, խաւսեցայց զառակս ի սկզբանէ: Որպէս լուաք և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ» (Սաղմ. Հէ 2-3), այլև հիշատակում է զանազան առակներ, ասացվածքներ կամ հավելասույթներ՝ գեղարվեստական տիպական համեմատություններ՝ արտահայտված առավելագույնը մեկ բայական կառույցով, իմաստասիրական չափազանց հակիրճ կերպով: Այս դասի մեջ կարելի է տեսնել Քրիստոսի հետևյալ խոսքը. «Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ զսոսա, նմանեացէ առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի» (Մատթ. Է 24), նաև ժողովրդական աֆորիզմները, որոնք Փրկիչն օգտագործում էր փարիսեցիներին և հուդայական

¹ Մեկնութիւն սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի, Վենետիկ, 1737, էջ 295: Meknutyun srbo Avetarani Tearn mero Hisusi Qristosi vor yst Mateosi, Venetik, 1737, ej 295:

դպիրներին հակադարձելիս. «Եւ ասէ ցնոսա. Ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս: Բժշկէ՛լ՝ բժշկեա զանձն քո. որչափ լուաք՝ զոր արարեր ի Կափառնաում, արա և աստ ի քում գաւառի» (Ղուկ. Դ 23) կամ՝ «Իբրև լուա Յիսուս՝ ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս» (Մարկ. Բ 17): Աստվածաշնչում առկա են գրական մի շարք ժանրեր, և սրանց հստակեցումն ու սահմանումը, անշուշտ, չափազանց կարևոր են նաև մեկնումի (էքզեգետիկայի) համար: Դրանցից են՝ «Ազադա-ն (հր. ՈՂՁԱ - պատումը (Մատթ. ԺԲ 40-42, Մարկ. Ժ 2-9, ԺԲ 28-31)», վախճանաբանական ժանրը (ապոլոգիան). «պաշտպանական խոսքը», արեթոլոգիան (հուն. *ἀρετή* – քաջություն, խիզախություն), առակի այն ժանրը, որ մենք ճանաչում ենք սլավոնական (Басня) անվամբ. այն բարոյախրատական հեքիաթ է, որի հերոսները, սակայն, կենդանիներն են, բույսերն ու անշունչ առարկաները: «Բասնիան» ժանրային առումով աղերսներ ունի առակի և ալեգորիայի հետ: Հին Կտակարանում երկու նմանատիպ առակներ կան՝ ենթադրաբար քաղաքական իրադարձությունների մասին (Դատ. Թ 8-15, 4 Թագ. ԺԴ 9): Երկու պարագայում էլ գործող անձինք ծառերն են:

Առաջին գրական ժանրը, որ հանդիպում ենք Աստվածաշնչում, ծննդաբանությունն է (հուն. *Γενεαλογία*, եբր. *תולדות*), ուր անունների թվարկմամբ նշվում է ազգերի, սերունդների ժառանգական փոխհաջորդականությունը (այս ժանրը հիմնականում հատուկ է «Ծննդոց գրքին»), այնուհետև՝ նամակի ժանրը, որի բնորոշ օրինակն է Հին Կտակարանում երկու անհատների՝ Դավիթի և Յովարբի միջև երկխոսությունը (Բ. Թագ. 11, 15):

Հունա-հռոմեական ժամանակաշրջանում չափազանց տարածված էին ուղերձները (հուն. *ἐπιστολή* - էպիստոլիա), որոնք խիստ արժեքավոր են հատկապես Նոր Կտակարանում: Այստեղ դրանք անվանվում են «Թղթեր»: Պողոսի Թղթերը միաժամանակ թե՛ բաց նամակներ էին՝ ուղղված ամբողջ հավատավոր համայնքներին, թե՛ քարոզի ու խրատի տեսք կրող ուղերձներ: Լայն տարածում ունեին նաև առակները (եբր. *משל* - համեմատություն)՝ ոչ ծավալուն, խրատական ասույթները կամ պատմությունները: Հինկտակարանյան «առակ»-ը չափազանց ընդարձակ եթե դիտենք, նույնն է՝ ինչ այսօրվա եզրույթով եթե նշենք՝ ասացվածքը, ինչպիսին է Սողոմոնի Առակաց գիրքը: Շատ ավելի բարդ է նորկտակարանյան առակների կառուցվածքը: Այստեղ մենք առաջին անգամ հանդիպում ենք պատում-առակների, որոնք քարոզի անքակտելի մասն են: Ասացվածքի և պատումի միջանկյալ դիրքում են համեմատություն- առակները (տե՛ս Մատթ. ԺԱ 16 կամ ԺԳ 44-50 և այլն):

Քրիստոսը ոչ միայն շարունակում է հինկտակարանյան առակային ժանրի ավանդույթը (տե՛ս Բ Թագ. ԺԲ 104, Գ Թագ. Ի 35-42, Եսայի Ե 1-7), այլև կատարելության է հասցնում այն՝ բերելով քննարկման նյութի ամբողջապես նոր որակ:

Նորկտակարանյան առակների ցանկացած դասակարգում կարող է լինել միայն պայմանական. գրեթե այդ բոլոր առակներն իրենց էությամբ բազմաշերտ են, ինչն էլ թույլ չի տալիս դրանց տարանջատել հստակ ենթաբաժիններով: Իհարկե, կան մի շարք առակներ, ուր մենք հանդիպում ենք նույն հովիվներին, մշակներին և նրանց տերերին, սակայն առակների ուղերձը չափազանց բազմազան է: Ավետարաններում, սակայն, միշտ չէ, որ հստակորեն կարելի է զատորոշել առակի ու այլաբանության սահմանը: Հիսուսի պատմություններից մի քանիսը կարող են դիտարկվել իբրև առակներ, սակայն այլաբանական հնարանքով: Այսպիսի ցայտուն օրինակ է, ասենք, «Չար մշակների» (Մարկ. ԺԲ 1-12) առակը, որի միջոցով Տերն ըստ էության մեզ է փոխանցում Փրկության ամբողջ խորհրդաբանությունը: Եվ ընդհանրապես առակները, ինչպես Պլումմերն է ասում, կարծես պատկերազարդ Ավետարան լինեն. «Քրիստոսի ձեռքում ամբողջ տիեզերքը վերածվում է մեզ համար պատկերավոր Ավետարանի»²:

Գրականության տեսանկյունից առակը այլաբանական, խրատական ոչ մեծ պատում է: Փիլիսոփայությունը առակը դիտարկում է իբրև պատմություն, որի խնդիրն է լուսաբանել ուսմունքի այս կամ այն դրույթը (երբեմն՝ անուղղակի, տարիմաստ, որը նպատակամղված է հագեցնելու իմաստավորման ու մտահանգման ոչ դյուրին ճանապարհը):

Նոր Կտակարանում կարելի է հանդիպել ավելի քան երեսուն առակների: Դրանք Ավետարանիչների կողմից գրառվում են հաճախ հաջորդաբար, ինչն էլ մեզ հնարավորություն է տալիս այդ առակները բաժանելու ըստ Փրկչի գործունեության երեք փուլերի՝ Լեռան քարոզից անմիջապես հետո և երկրորդ ու երրորդ Պահքի շրջանների միջև:

Առաջին շրջանի առակներում խոսվում է Աստծո արքայության և հանրության մեջ եկեղեցու դերի մասին: Այս թվում կարելի է դասել Սերմնացանի, Որոմների, Մանանեխի հատիկի, Ուռկանի, Թթխմորի և այլ առակներ: Այս շրջանի առակները շարադրված են Մատթեոսի Ավետարանի տասներորդ

² О. А. Тярк. О Притчах и почему Иисус ими пользовался, <http://www.blagovestnik.org/books/00300.htm>

գլխում և ներառում են Քրիստոսի՝ Կափարնայում ծառայության (քարոզչության) ընթացքը:

Առակների փոխհաջորդող երկրորդ խմբին հանդիպում ենք Ղուկասի Ավետարանի Ժ-ԺԹ գլուխներում.

ա) Քրիստոսի առակները Գալիլեայից Երուսաղեմ ճանապարհին. «Բարի Սամարացու», «Անմիտ մեծատան», «Մանանեխի հատիկի», «Տանուտիրոջ և ծառաների», «Հարսանիք հրավիրվածների», «Կորած ոչխարի», «Անառակ որդու» և այլ առակներ:

բ) Երուսաղեմյան վերջին օրերին ասված առակները՝ «Տասը կույսերի», «Քանքարների» և «Չար մշակների» առակները: Դրանք ձևով պարզ են և միաժամանակ չափազանց խորիմաստ իրենց էությամբ: Եվ այստեղ անհնարին է կողմնորոշվել առանց մեկնողական գրականության: Վերջինս մի կուռ, ամբողջական համակարգ էր, երբ մեկնությունների միջոցով ընթերցողի համար հասանելի էր դառնում եկեղեցու վարդապետությունը, և միևնույն ժամանակ այդ վարդապետությունն էլ շնչառություն ու կենսունակություն էր ձեռք բերում քարոզների և մեկնությունների շնորհիվ: Աստվածաշունչը մեկնելիս, սակայն, անհրաժեշտ է ցուցաբերել որոշակի կանոնականություն, հատկապես դրա կարիքը զգացվում է այլաբանական տարրնթերցումների, առակների մեկնության պարագայում: Խնդիրն այն է, որ առակների մի զգալի մասը չափազանց նման էր պեգորիաների, իսկ այդ դեպքում յուրաքանչյուր դրվագ մեզ մղում է որոնելու խորիրոգաբանության նորանոր շերտեր: Նոր Կտակարանի առակների մեծ մասը ժանրային առումով, եթե այդպես կարելի է ասել, մաքուր առակներ են, այսինքն՝ մի ամբողջ պատմություն ծառայում է մեկ հիմնական գաղափար ունկնդրին հասցնելուն: Այդօրինակ առակների ամբողջ նպատակը որոշակի եզրակացության հանգելն է, ինչպես ասում են՝ «այսպիսով առակս զի՞նչ ցուցանե»: Միանշանակ նմանօրինակ առակներից են՝ «Դատավորի և այրի կնոջ», «Կորած դրամի», «Անիրավ տնտեսի» պատումները և այլն:

Մեր մատենագրության մեջ բավական ընդարձակ էջեր են նվիրված այն խնդրի պարզաբանմանը, թե ինչու Քրիստոսը քարոզեց նաև առակներով: VIII դարի նշանավոր աստվածաբան Ստեփանոս Սյունեցին պարզաբանում է. «Որք կային առ ծովեզրն, ընդ նոսա առակաւք խաւսեր, զի դեռ ևս ոչ էին կարաւոք յայտնապէս լսել զբանն Քրիստոսի, իսկ աշակերտացն ասաց որպէս կարաւոց»³, և կամ, ինչպես Գրիգոր Տաթևացու աշակերտ **Մատթեոս**

³ **Ստեփանոս Սյունեցի**, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Երևան, 1994, էջ 76: Stepanos Sjuneci, Meknutyun choric Avetaranchacn, Yerevan, 1994, ej 76:

Ջուդայեցին է իր «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի» քարոզգրքում անդրադառնում այս թեմային. «Բազմադիմի առակաւք զամենախնամ տեսութիւն աստուածային սիրոյն, զոր ունի առ արարածս յայտ առնէ, զի սովորութիւն է բժշկացն առ հիւանդն գնալ: Է երբեմն, զի դեղ առնէ վիարցն և ցաւոցն, և է, զի բանս մխիթարականս խօսի և է ինչ, զի յոյս դնէ զայք արինակ տալով, զոր առողջացուցեալ է»⁴: Այս կամ այն կերպ բոլոր մեկնիչներն էլ ձևակերպում են Քրիստոսի առակներով խոսելու հիմնական դրդապատճառները, ըստ նրանց շատ մարդիկ ուղղակիորեն ունակ չէին ընկալելու փրկչական վարդապետութիւնը, և Հիսուսի առակները նրանց ունկին՝ մատչելիացված, «ադապտացված» նույն վարդապետութիւնն է, որոնք, սակայն, օժանդակ միջոց չեն դառնում, այլ քարոզխոսության անքակտելի մասն են: Այսպիսով, սերմանողի առակն ամեննին էլ հողը ճիշտ ցանելուն չի վերաբերում: Սա պատում է Աստծո՝ մեզ տված շնորհների մասին: Տիրոջ խոսքի սերմերը տարբեր մարդկանց մեջ տարբեր կերպ են պտուղ տալիս. մեկը վերադարձնում է ստացածից էլ ավելին, մյուսի մոտ ոչ մի «բերք» էլ չի լինում: Ինչպես «Մատթեոսի Ավետարանի մեկնութեան» աշխատության մեջ գրում է **Գրիգոր Կարնեցին**. «Խոսեր նոցա բազում բանս աստուածային պէսպէս առակօք, զի սովորութիւն էր յայնմէջ ժամանակի, զի մինչ ասէ. «Էլ սերմանցան ի սերմանել», ոչ թէ իմացեալ լինի Քրիստոս պատմել կամի զումէքէ մարդոյ սերմանցանէ, որոյ սերմանումն աստ անկեալ է և ումն անդ, այլ ի ներքոյ այնց բանից ծանուցանել կամի սերմանօղն բանին կենաց ի սիրտս զանազանից անձանց, որոց ոմանք ընդունին յինքեանս և ոմանք ոչ և ընդունողաց ոմանք բուսուցանեն և ոմանք ոչ, և բուսուցողաց ոմանք հեղձուցանեն և ոմանք ոչ, և ոմանք տան ընդ միոյ երեսուն և ոմանք վացուն և հարիւր, զի սերման է Ինքն Քրիստոս, սերմն է Բանն Աստուծոյ, երկիրն ի յոր սերմանի է հումքն մարդկանց, որոց ոմանք ոչ ընդունին զԲանն Աստուծոյ, իբր թէ անկանի առ ճանապարհաւ, ոմանք ընդունին և բուսուցանին, բայց ոչ հասուց անին....»⁵:

Ունկնդիր լինելով Քրիստոսի բառերին՝ բազմությունը սովորում էր նայել աշխարհի հրաշալի արարչությանը՝ որպես մի վիթխարի առակի. «Այդ օրը

⁴ **Մատթեոս Ջուդայեցի**, Մեկնութիւն ավետարանին Ղուկասու, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ.), ձեռ. 2519, թ. 38 աբ: Matteos Jughaeci, Meknutyun avetaranin Ghukasu, M.Mashtoci anvan Matenadaran, dzer. 2519, t. 38 ab:

⁵ **Գրիգոր Կարնեցի**, Մեկնութիւն Աւետարանին Մատթէի, ՄՄ. ձեռ. 1248, թ. 188ա: Grigor Karneci, Meknutyun Avetaranin Mattei, M.Mashtoci anvan Matenadaran, dzer. 1248, t. 188a:

Յիսուս տնից դուրս գալով՝ նստեց ծովեզերքին: Եւ նրա մօտ շատ ժողովուրդ հավաքուեց, այնպէս որ նա նավակ մտավ ու նստեց, իսկ ամբողջ ժողովուրդը կանգնած էր ծովեզերքին: Եւ նրանց հետ առականերով շատ բաներ էր խոսում...» (Մատթ. ԺԳ 1-3):

Քրիստոսի առականներն իրականության հետ չափազանց բնական են շաղկապվում. անցնում է Փրկիչը յուր աշակերտների հետ ցանված դաշտերի միջով և խոսում է հոգևոր հացի մասին, նստած է խնջույքի սեղանին և համեմատում է Երկնքի Արքայությունը մեծ խնջույքի հետ, հանդիպում է ձկնորսներին ու խոսում ուռկանի և ձկնորսության մասին (տե՛ս Ղուկ. Դ 18): Առականների հերոսները վերցված էին այն օրերի բազմաբղետ կյանքից՝ հովիվներ, հողագործներ, ձկնորսներ, վաճառականներ, հաց թխող կանայք, փողոցում խաղացող երեխաներ, զանազան տեղերում ծառայող պաշտոնյաներ: Ուստի առականների մեջ ունկնդիրը տեսնում էր իրեն, իսկ դրանց հասցեատերերը բոլորս ենք, բոլոր ժամանակներում ու ցանկացած հարաբերությունների մեջ եղած «ունկնդիրներս»: Ահա դա ինչպէս է մեկնում XII դարի Արևելյան Հայաստանի նշանավոր վարդապետներից մեկը՝ **Սարգիս Կունդը**. «Ի լերինն: Թէպէտև այնչափ վարդապետեաց, ո՛չ առակ յաղեաց, զի տխմարք էին և ո՛չ էին կարող յայտնապէս լսել զԲանն Քրիստոսի, իսկ աստ դպիրքն և փարիսացիքն ընդ նոսա էին: Բանայ առակաւ զբերանն, խաւսի զիմաստութիւն՝ ի սկզբանէ զծածկեալն»⁶: Ասել է թե, նախ՝ հարկավոր էր բացել հոգևոր ճշմարտություններ որսալու ունկնդրի ունակությունը. «Ով ականջ ունի, թող լսի» (Մատթ. ԺԳ 9): Քրիստոս, սակայն, առականները բարձրացրեց միանգամայն նոր հարթության վրա. անիմանալի ու անհասանելի երկնային ճշմարտությունները ներկայացրեց մեզ հասկանալի ու ընդունելի միջավայրում: Ընդ որում Քրիստոսի առականները բացառիկ են, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ոչ ոք վարդապետելիս՝ ո՛չ աշակերտները, ո՛չ սրբերը, այլևս չգործեցին խոսել ու քարոզել առականերով:

Նորկտակարանյան առականներն անմիտ կլինի դասակարգել ըստ իրենց կարևորության, սակայն մի բան անհերքելի է. որոշ առականների առավել մեծ տեղ է հատկացվել հետագա մեկնիչների աշխատություններում, այսինքն՝ եկեղեցու Հայրերը որոշ առականներ համարել են ասես մարմնացումը քրիստոնեական դավանանքի: Պահքի շրջանում հայոց եկեղեցում ընթերցվող առակ-

⁶ **Սարգիս Կունդ**, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխ. Եզնիկ. եպս. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 200: Sargis Kund, Meknutyun Avetaranin Ghukasu, S.Etchmiadzin, 2005, ej 200:

ները, անշուշտ, դասվում են դրանց թվին: Նորկտակարանյան յուրաքանչյուր առակ ուղղված է, եթե կարելի է այսպես ասել, մեկ հիմնական թիրախի դեմ, այնտեղ առանձնացվում է սկզբունքային մեկ ճշմարտություն: Այդ մասին խոսում է ռուս ուղղափառ եկեղեցու ականավոր աստվածաբան, եպիսկոպոս **Թեոփան Ճգնակյացը** (1815-1894). «Յուրաքանչյուր առակ որոշակիորեն շղարշված է և պատկերավոր կերպով է բացատրում այս կամ այն առարկայի էությունը, սակայն այն նույնությամբ և ամբողջությամբ չի կրկնում այդ առարկան, որի պարզաբանմանն է ուղղված: Այդ պատճառով կարիք չկա առակի բոլոր դրվագները պարզաբանել ամենայն մանրամասնությամբ: Առակում կարևոր է նրա հիմնական գաղափարը միայն»⁷:

Այս խնդիրը քննարկվում է նաև նոր ժամանակների գիտական հանրություն: Իր «A Theology of the New Testament» աշխատության մեջ այս հարցին անդրադառնում է և XX դարի բապտիստ աստվածաբան **Լեոդ Ջորջ Էլդոնը**. «Առակի առաքելությունը ոչ թե մի շարք ճշմարտություններ հաղորդելն է, այլ մեկ որոշակի սկզբունքային ճշմարտության փոխանցումը»⁸: Ասել է թե՛ պատկերները թափանցում են այնտեղ, որտեղ լավ փաստարկված ուսմունքը ճանապարհի չի գտնում: Չպետք է մոռանալ, որ Քրիստոսի ունկնդիրների մի մասը թշնամաբար էր տրամադրված Նրա նկատմամբ: Նրանք չէին հավաքվում Քրիստոսի շուրջը՝ Նրա վարդապետությանը հետևելու: Սակայն վառ պատմություններում քողարկված, այնչափ ազդեցիկ ու պարզ էր մատուցվում ուսմունքը, որ գրավում էր ունկնդրի երևակայությունը, առնչակցվում նրա խղճին և փոխում շատերի կանխակալությունը, նախքան դա նրանք կնկատեին:

Ցանկացած գիտություն հավաքում է, համակարգում շրջապատող աշխարհի մասին այդ միջոցին իր ունեցած գիտելիքներն ու փորձում վերափոխել աշխարհը, մինչդեռ մեր աշխարհայեցումն առավել կապված է զգայական ճանաչողության կենսափորձի հետ, այն ինչ-որ առումով անխառն է ու չմիջնորդավորված: Օրվա փորձաքննական գիտելիքի ու պատճառահետևանքային փաստարկվածության հետ առաջին հայացքից առնչություն չունեցող նորկտակարանյան այս առակները, թվում է, պիտի լինեին ժամանակավրեպ և այսօրվա բանիմաց մարդու համար պարզունակ, սակայն նրանք, միախյուսված լինելով ավետարանական քարոզին, առավել քան կենսունակ են, և դա է թերևս նրանց գեղարվեստականության բացառիկ գաղտնիքներից մեկը:

⁷ Святитель **Феофан Затворник**. Притча о безрассудном богаче, http://www.stjohndc.org/Russian/parables/ParablesR/r_Par_3_17.htm

⁸ Библиотека Гумер - Лэдд Джордж Элдон. Теология Нового Завета.

ԱՄՓՈՓՈՒՄ

Գրականագիտության համար չափազանց կարևոր է որոշակիացումը, թե ինչ գրական ժանրեր են գերակայում Սուրբ Գրքում: Նմանատիպ ճշտումները երկրորդական չեն ո՛չ էքզեգետիկայի, ո՛չ հերմենևտիկայի գիտական ուսումնասիրությունների շրջանակներում: Գրական ժանրերի տեսանկյունից Հին և Նոր Կտակարանների առակների միջև քիչ ընդհանրություն կա: Չնայած այն հանգամանքին, որ առակասության ժանրը չափազանց տարածում ուներ Հին աշխարհում (հատկապես Հունաստանում և Հրեաստանում), սակայն Քրիստոս դրանք բարձրացրեց միանգամայն նոր խորհրդաբանական որակի: Նորկտակարանյան առակներն աննախադեպ հարուստ սիմվոլիկա ունեն, որոնք անհնար է բացահայտել առանց մեկնողական գրականության խոր վերլուծության: Սուրբ Գրքի մեկնիչները բավական էջեր են հատկացրել այն խնդրին, թե ինչու Քրիստոս քարոզեց նաև առակներով: Հոդվածում կան հղումներ միջնադարյան հայ մեկնիչների աշխատությունների այդ հատվածներից:

Բանալի բաներ - Աստվածաշունչ, քարոզխոսություն, մեկնություն, առակ, պահք, ժանր:

ЛИТЕРАТУРНЫЕ ЖАНРЫ В БИБЛИИ И ВОПРОС ПРОПОВЕДОВАНИЯ ХРИСТА ПРИТЧАМИ В АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ РУКОПИСЯХ

ОГАННЕС БЕЙЛЕРЯН

В филологии чрезвычайно важно определить какие жанры преобладают в Библии. Эти уточнения немаловажны как в экзегетических, так и в герменевтических исследованиях. С точки зрения литературного жанра между притчами Ветхого и Нового Завета мало общего. Несмотря на то, что жанр притч был достаточно распространен в первом веке, Христос их возвысил на другой гносеологический уровень. Новозаветные притчи имеют беспрецедентно богатую символическую структуру, которая не может быть раскрыта без глубокого изучения библейского толкования. Толкователи Святого Писания много внимания уделяли вопросу проповедования Христа притчами. В данной статье приводится и разъяснение этого вопроса армянскими средневековыми толкователями.

Ключевые слова - Писание, проповедь, толкование, притча, пост, жанр.

LITERARY GENRES IN THE BIBLE & THE ISSUE OF CHRIST'S PREACHING BY PARABLES IN THE PAGES OF ARMENIAN MEDIEVAL MANUSCRIPTS

HOVHANNES BEYLERYAN

On behalf of philology it is extremely important to make precise what genres prevail in the Bible. Verifications of such kind are not of secondary importance in Biloblical exegesis and hermeneutics. From the perspective of literary genre, there is little in common between the parables of the Old and New Testaments. Even though parables as a genre were widely familiar in the first century (especially in Greece and Israel) with Christ it was raised to another, a completely new symbolic status. The New Testament parables have unprecedentedly rich symbols, which can not be disclosed without a profound study of prototype literature. The Scripture Interpreters have written pages explaining the reasons for Christ's use of parables for preaching in addition to other means. This article contains references to the works of Medieval Armenian interpreters.

Key words – Holy Bible, Scripture, sermon, interpretation, parable, post, genre.